որ միմիայն հանր. նախագահը կարող է ունենալ 320 դահեկան:

Ուշադրութեան արժանի է, որ Շահամիրեանը մի յատուկ օրէնքով խրախուսում է հայրենի արդիւնագործութիւնը, տուրքից ազատելով բոլոր նրանց, որ կը հաղնեն երկրում պատրաստած կտորներից հագուստ: Թէեւ միաժամանակ այն էլ պիտի ուելացնել, որ նա այդ անում է միմիայն բարոյական շարժառիթներից դրդուած.—

«Ամէն ոք — ասում է նա— ազատապէս կարող է հաղնել հայոց աշխարհում պատրաստած կտորներից. իսկ նրանք, որ ձգտում են հաղնելու օտար աշխարհի ձեռագործներ, արու թէ էգ, իշխան թէ պաշտօնեայ, նրանք պետութեանը վճարում են տարեկան 20 դահեկան՝ իրենց սնապարծութեան համար, որովհետեւ նրանք ուզում են աւելի փայլել ընդհանուրի մէջ» (յդբ):

Մի անգամ ընդմիշտ սահմանուած մուտքերով — տասանորդ, մաքս, հարկ եւ այլ բազմազան տուրքեր — պետական գանձարանը պիտի մտնեն, ըստ Շահամիրեանի — հսկայական գումարներ, որոնց մի մասով պետութեան բոլոր ընթացիկ եւ արտակարգ ծախսերը հոգալուց յետոյ — ռոճիկ, դպրոցներ, ճանապարհներ, խնամատարութիւն են. — մի խոշոր մասն էլ մնում է անակնկալ դէպքերի համար կամ կազմում պետութեան ֆոնտը:

Որպէս վերջաբան՝ այս գլխի՝ տեսնենք, թէ մեր հեղինակը ի՛նչպիսի դրամական սիստեմ է առաջարկում ապագայ Հայաստանի համար: Պարզ է, որ թղթադրամի մասին խօսք լինել չի կարող: Բոլոր դրամները մետաղից են — ոսկի, արծաթ, պղինձ եւ կապար: Միաւորը դահեկանն է: Դրամի ծանրութիւնը, բոլոր տեսակների համար է 24 դրէթ*): Դրամ կարելու իրաւունքը միայն պետութեան է պատկանում: Դրամի մի երեսում պիտի լինի «նշան տէրունական սուրբ խաչի, թուաւ ժամանակի տպման», իսկ միւս երեսում «գրեցեալ բարի կացութիւն հայոց եւ անուն տեղի, որում տպեսցի» (ՆԻԶ): Մասնաւոր մարդիկ իրենց ունեցած ոսկին, արծաթը, պղինձը եւ կապարը կարող են տալ պետութեանը՝ դրամ կտրելու, բայց վճարելով դրա համար հազարին երկուս ու կէս (ՆԾ, ՆԾԳ):

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ

Շահամիրեանի ամենից փայփայած հիմնարկութիւնը դատարանն է, որովհետեւ հայ ժողովրդի փրկութեան ու երջանկութեան ամենագլխաւոր աղբիւրը օրէնքն է, իսկ օրէնքի պաշտպանն ու գործադրողը դատարանն է: Դատարանին ենթարկւում են ամէնքը — սկսած հանր. նախագահից եւ ամենայն հայոց կաթողիկոսից մինչեւ վերջին քաղաքացին: Դատարանն է, որ ամէն մարդու հատուցանում է իր գործերի համեմատ — բարին բարի եւ չարին չար:

Սակայն, զարմանալի է, որ դատարանին այդքան մեծ իշխանութիւն եւ իրաւունքներ ընծայելով հանդերձ, մեր հեղինակը մերժում է դատաւորների անկախութեան սկզբունքը, — մի հանգամանք, որ միանգամայն անհաշտելի է դատարանի այդքան մեծ հեղինակութեան հետ: Նրա համար դատաւորները եւս պետական նոյնպիսի պաշտօնեաներ են, ինչպէս, օրինակ, դինուորական եւ վարչական պաշտօնեաները: Նրանք անփոփոխելի չեն. նրանք էլ ընտրւում են Ազգ. ժողովից, ընտրւում են 3 տարով եւ ուրեմն կախումն ունեն իրենց ընտրողներից:

Աւելի. նահանգական կամ շրջանային դատաւորները — մեր ներկայ արտայայտութեամբ — նոյնիսկ կախումն ունեն իրենց նահանգի կուսակալից կամ իշխանից: Եւ այդ կախումը հասնում է մինչեւ այնտեղ, որ դատարանի ութ անդամները ընտրւում եւ վաւերացւում են իշխանի համաձայնութեամբ. որ քրէական դատերի ժամանակ — ինչպէս տեսանք — իշխանը կամ նահանգապետը, ամենաբարձր աստիճանի վրայ բազմելով, ինքն է կարդում դատարանի վճիռը, կարծէք նա լինի դատարանի նախագահը (շէ):

Դրա փոխարէն, դատաւորներից նա պահանջում է անձնական մի շարք բարեմասնութիւններ, որով նրանք կարողանային իրենց բարձր պաշտօնը ըստ արժանւոյն կատարել:

*) «Դրէթ» հաւանօրէն կարատ բառն է, որ հաւասար է ¼ դրամին կամ ռուս. մէկ տասնրվեցերորդ մսխալին: